

ԳՐԱԲԱՐԻ -ակ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐՋԱԾԱՆՑԸ

Գ. Ս. ԱՍԱՏՐՅԱՆ, Գ. Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

1. 1. Հայերենի -ակ վերջածանցն իրանական ծագում ունի¹: Հին իրանական լեզուներում այն (-aka) մասնակցում էր ածականների և գոյականների նվազական ձևերի կազմությանը: Իսկ բայական հիմքերից այդ ածանցի օգնությամբ կազմվում էին նաև գործող անձ ցույց տվող անուններ²: Հին իրանական լեզուներում այս ածանցի սահմանափակ կիրառության համեմատությամբ այն լայն տարածում է ստանում միջին իրանական (և, հետևաբար, նոր իրանական) լեզուներում: Կարելի է, ըստ երևույթին, ենթադրել, որ հին իրանական կենդանի խոսակցական լեզվում (հավանաբար, բոլոր հին իրանական բարբառներում) *-aka ածանցը օգտագործվում էր առավել հաճախ, քան գրական լեզվում (ինչպիսին վաղ ժամանակաշրջանում դարձավ հին պարսկերենը), կամ էլ՝ բանավոր-սակրալ լեզվում (ինչպիսին էր Ավեստայի լեզուն): Կարելի է ենթադրել նաև, որ միջին (ինչպես նաև նոր) իրանական լեզուներում -ak-ով (<*-aka) ժառանգված ձևերի կողքին առաջացան մեծ քանակությամբ -ak-ով նորակազմություններ, որոնք պատմահնչյունաբանական տեսանկյունից ձևով հաճախ տարբերվում էին հին *-aka-ից անմիջապես սերված ձևերից (նման իրավիճակ կարելի է դիտել, օրինակ, սողդերենում կամ նոր պարսկերենում և տաջիկերենում): Համենայն դեպս հայերենը խնդրո առարկա ածանցը փոխ է առել միջին իրանական լեզվական դարաշրջանում: Հայերենում,

¹ Տե՛ս R. Schmitt. Grammatik des klassisch-Armenischen. Innsbruck, 1981, S. 84; Idem. Iranisches Lehngut im Armenischen. — RĖA, t. 17, 1983, S. 102. -ակ -ով ածանցված անունների համառոտ իմաստաբանական դասակարգումը, ըստ երևույթին, առաջին անգամ տվել է Մ. Աբեղյանը (Հայոց լեզվի տեսություն. — Երկեր, 2, Երևան, 1974, էջ 194): Հետագա ուսումնասիրություններում այն պահպանված է համարյա նույնությամբ (տե՛ս Ա. Ա. Մուրվալյան. Հայոց լեզվի բառային կազմը. Երևան, 1955, էջ 306—308; Ս. էլ ույան. Ամանակները ժամանակակից հայերենում. Երևան, 1967, էջ 123, 136): Այդ ածանցին նվիրված աշխատությունների շարքում առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Զ. Բոլոնեզիի հոդվածը (Studi armeni. — Ricerche linguistiche, Anno V, v. V, 1962, որտեղ (էջ 13—17) հատկապես քննարկվում է nomen agentis-ի ֆունկցիան): 1970-ական թվականներին սկզբին լույս տեսան Զ. Գրեպինի հայերենի վերջածանցներին նվիրված մի շարք աշխատանքներ, որոնցից առաջինում ուսումնասիրված են միայն իրանական ծագում ունեցողները (J. Greppin. The Middle Persian Nominal Suffixes in Classical Armenian. — RĖA t. X, 1973—1974, p. 1—9, որտեղ, ի դեպ, հեղինակը հաշվի չի առել Բոլոնեզիի վերոհիշյալ հոդվածը. այնուհետև՝ Classical Armenian Suffixes. A Historical Study. Wien, 1974, -ակ-ի մասին տե՛ս § 19, էջ 31, մատենագիտական ցանկում տե՛ս նուև հեղինակի՝ հայերենի վերջածանցներին նվիրված մյուս աշխատությունները): Գրեպինի հետազոտությունները Ս. Աբեղյանի աշխատության համեմատությամբ որևէ նորություն չեն հաղորդում մեզ՝ ո՛չ -ակ ածանցի ծագման (չնայած իրենց պատմական ուղղվածությանը), ո՛չ էլ, առավել ևս, նրա իմաստային առանձնահատկությունների մասին:

² Տե՛ս մանրամասն զրականությամբ հանդերձ՝ Դ. Ս. Асатрян. Отглагольные имена на -ака в среднеперсидском и парфянском. — Արևելագիտության հարցեր, 3, Երևան (հրատ. մեջ): -aka ածանցը ծագում է հ.ե.*ek/-ko-ից. այդ մասին տե՛ս K. Brugmann. Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, II, 1. Strassburg, 1906, S. 475—506:

³ Դ. Ս. Асатрян. Указ. соч.

ինչպես իրանական լեզուներում, այն հանդես է գալիս անվանական և բայական հիմքերի հետ: Իմաստաբանության տեսակետից հայերենում ալգ ածանցն ի հայտ է բերում իրանականին բավական մոտ իմաստային համակարգ: Գրաբարում դիտվում են -ակ ածանցի հետևյալ նշանակությունները:

2. 1. -ակ-ով ածանցված անունների բոլորից վառ կերպով արտահայտված և գրականության մեջ ամենից հաճախ նշվող նշանակությունը նվազական-փաղաքական իմաստն է, որն այն հաղորդում է անվանական հիմքերին⁴:

1) լճակ (լիճ) Ոսկ. ա 2.8, 2) ծովակ (ծով) Եզնիկ 9. 9, Ղուկ. 7. 1, Երզ. 7. 4, Վեցոր. 4. 114, 3) անտառակ (անտառ) Բուդ. գ. 14. 33, 4) խոճկորակ (խոճկոր) Թր. քեր. 15 (բերվում է որպես «փաղաքական անուն» օրինակ)։ 5) գրակ (գիր) Կոչ. և «գրքուկ», 6) վիշապակ (վիշապ) Փիլ. Լիւս. 151 (Աւգ. draconculum), 7) լեռնակ (լեռն) ՅՏ. կթ. 311, 8) գազանակ (գազան) Լմբ. սղ.

Ածանցի նվազական իմաստը, որն այնքան կենդանի էր գրաբարում, առկա է և նոր հայերենում, սակայն այստեղ ավելի պրոդուկտիվ է -իկ վերջածանցը (<իրան. *-ika)⁵:

2. 1. 1. նվազական իմաստից երբեմն կարող է զարգանալ նվաստական իմաստ. գծողակ «նուաստ գրիչ»՝ «զեղկելի գծողակս յիշեցէք ի մաքրափալէ աղօթս ձեր» Յիշատակ., իշակ «աղքատի, անշուք և անարգ էշ» Տօնակ. (տես 2. 3.):

2. 2. -ak ածանցի նվազական նշանակությունը իրանական լեզուներում նույնպես դերակշռող է. հմմտ. սողդ. rynec «երեխա», qnec «աղջնակ», պրսկ. aspak «ծիսկ», sahrak «փոքր քաղաք»⁶, քրդ. kuřik «փոքր տղա», dilik «սրտիկ», keçik «աղջնակ», jinik «կին (փղջ.)», բելուջ. gvark «զառնակ», gvask «հորթուկ» = սնակր. vatsa-ka⁷, լազնոր. púllak «փոքր երեխա», žútak «որդեակ»⁸ հմմտ. նաև նվաստական նշանակությամբ պրսկ. zānāk «կնիկ» և ալլն:⁹

2. 3. նվազական իմաստը *-ko ածանցին հատուկ է եղել դեռևս հնդեվրոպական նախալեզվում¹⁰: Այն բավական ցայտուն կերպով արտահայտված է բազմաթիվ հին հնդեվրոպական լեզուներում. հմմտ. սնակր. kumāraka

⁴ Տե՛ս, օրինակ, Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 194: Ա. Ա. Մուրվախյան. նշվ. աշխ., էջ 306; J. Greppin. The Middle Persian Nominal Suffixes, p. 4; Idem. Classical Armenian Nominal Suffixes. p. 31. Վերջին հեղինակի կարծիքով հայերենի -ակ-ը իր տարբեր նշանակություններով ծագում է իրանական տարբեր ածանցներից. անվանական -ակ-ը իբր ծագում է միջին պարսկական -k-ից (բերվում է Կ. Գ. Զալեմանից վերցրած ավ. zanu, միջ. պրսկ. zānūk օրինակը. տե՛ս C. Salemann. Mittelpersisch.—GIPh, Bd I, S. 277), իսկ նվազական -ակ-ը՝ -ak-ից: Պետք է նշել, սակայն, որ -k ձևը -ak ածանցի լոկ տարբերակն է, որը Զալեմանի մոտ ուղղակի բերվում է առանձին պարագրաֆի տակ (տե՛ս C. Salemann. Op. cit., ibid). այս տարբերակների դիտարկումը իրանական լեզուներում է անվանական հիմքերի պատմական տրակերով:

⁵ R. Schmitt. Iranisches Lehngut im Armenischen, S. 103.

⁶ I. Gershevitch. A Grammar of Manichean Sogdian. Oxford, 1954, § 988, միջին պրսկ. տե՛ս C. Salemann. Op. cit., p. 277; հմմտ. նաև՝ H. Hubschmann. Persische Studien. Strassburg, 1895, S. 244—245.

⁷ W. Geiger. Lautlehre des Balūči. München, 1891, S. 25—26.

⁸ A. Л. Хромов. Ягнобский язык. М., 1972, с. 93.

⁹ Տե՛ս նաև աֆղաներենում՝ E. Trumpp. Grammar of the Pasto or Language of the Afghans. Tübingen, 1873, S. 49—50.

¹⁰ K. Brugmann. Op. cit., p. 504.

«փոքր տղա», padakā «տոտիկ», putraka. «տղա, որդիակ» և այլն,¹¹ հուն. παιδ'εως «փոքր երեխա», հին սլ. сынък «որդիակ»¹² և այլն:

Բացի նվազականից սույն ածանցը երբեմն անվանը հաղորդում է նվաստական իմաստ, օր. սնսիր. aśvaka- «խղճուկ ձի» հուն. ἀνὸρῶπις «ամարդուկ» (նվաստ.)¹³ (տե՛ս 2.1.1.):

3. 1. -ակ ածանցի ամենահետաքրքիր բառակազմական հնարավորությունը բայական հիմքերից գործող անձի անվան(nomen agentis) կազմությունն է (մեծ մասամբ ներկայի, երբեմն՝ անցյալ կատարյալի հիմքից, տե՛ս 3. 3. 3.): Մենք բաժանում ենք այդ բառերը երկու խմբի. երբ լեզվում առկա է հիմք բայը՝ համապատասխան -ակ-ով անունը պետք է համարել կենդանի հայերեն կազմություն, հակառակ դեպքում այն իրանական փոխառություն ենք համարում (մեր հետազոտությունից դուրս են մնում վստահելի ստուգաբանություն չունեցող, գործող անձի իմաստ արտահայտող այնպիսի անուններ: ինչպիսիք են, օրինակ, «հեղինակ», «ավազակ» և այլն):

Դասական բնագրերում¹⁴ այդպիսի անունները սակավաթիվ են: Սակայն դասական լեզվում ոչ այնքան պրոդուկտիվ բառակազմական այդ կաղապարը լայն տարածում գտավ և ակտիվորեն կիրառվեց հունաբան թարգմանություններում և հունարան ուղղությանը հարող հեղինակների մոտ, որոնք նրանով բազմաթիվ նորակազմ բառեր և «հունաբան» պատճենումներ կերտեցին¹⁵:

3. 1. 1. Nomen agentis-ի նշանակությունը լեզուներում հաճախ առաջանում է ներկա դերբայի գոյականացման ճանապարհով, այդ պատճառով գործող անձի անուններն իրենց նշանակությամբ բավական մոտ են կանգնած ներկա (հայերենում՝ ենթակայական) դերբային¹⁶: Այդ երևույթի հետևանքով երբեմն նրանք ստանում են բայական ձևերին հատուկ կառավարում (օր.

¹¹ W. D. Whitney. Sanskrit Grammar. London, 1967, § 1222d, p. 467.

¹² K. Brugmann, ibid.

¹³ Նույն տեղում:

¹⁴ Հայ հին թարգմանական գրականության պարբերացման մասին տե՛ս С. С. Аревшатян. Формирование философской науки в древней Армении. Ереван, 1973, с. 37—40; Լ. Տեր-Պետրոսյան. Փորձ հայ հին և միջնադարյան թարգմանական գրականության պարբերացման.—«Էջմիածին», 1982, Դ, էջ 45—52:

¹⁵ Հունաբան դպրոցի թարգմանիչների հիմնական սկզբունքը՝ սկզբնագրի նյութական վերաբաշխությունը, ստիպում էր նրանց ոչ միայն պատճենել նրա շարադասությունն ու շարահյուսական դարձվածքները, այլև ուղղակի թարգմտական րառակազմական և բառաթիբական ձևեր և քերականական կառուցուրները (Գ. Բ. Ջաճուկյան. Քերականագիտական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում. Երևան, 1954, էջ 45): Բառակազմության բնագավառում նրանց ամենանշանակալից նորամուծությունը՝ հունարենից պատճենված բազմաթիվ նախածանցալոր նորակերտ բառերն էին, ըստ որում նախածանցների մեծամասնության (բացի համ-, նախ-, վեր-, տար-, փոխ-ից, որոնցով ածանցված բառեր ավանդված են արդեն դասական բնագրերում) ծագումը բացատրվում է կամ այդ նպատակի համար որոշ արմատների և մակբայների արհեստական հարմարեցումով (Հ. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. մաս 2, Երևան, 1951, էջ 162; Ա. Մուրադյան. Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում. Երևան, 1971, էջ 151), կամ էլ՝ «բարբառներում հանդիպող մի քանի նախածանցների մասսայական կիրառություն» տալով (Գ. Բ. Ջաճուկյան. Նշվ. աշխ., էջ 47): Մեզ մոելի հավանական է թվում երկրորդ հնարավորությունը, որն իր ղուգահեռն է գտնում դասական լեզվում քիչ գործածական գործող անձի անվան իմաստով կիրառվող -ակ ածանցին հունաբան դպրոցի թարգմանիչների կողմից «մասսայական կիրառություն տալու» փաստի մեջ:

¹⁶ Հմմտ. -ող-ով կազմությունները ժամանակակից հայերենում. В. М. Григорян, С. К. Тноян. Отглагольные существительные с суффиксами номіна agentis в современном армянском языке.—В кн.: Структурный анализ текста. Ереван, 1979, с. 70.

սանսկրիտում¹⁷։ Հայերենում -ակ-ով դործող անձի անունների դերբայական նշանակությունն արտահայտվում է այն դեպքում, երբ նրանք հանդես են գալիս որպես բաղադրյալ ստորոգյալի անվանական մաս, որը համապատասխանում է հունարեն դիմավոր բայական ձևերին (տե՛ս 3. 2 Ն՝ 2)։

3. 2. Դասական հայերենում ավանդված կազմություններ.

1) գտակ (գտանեմ, անցյալ կատարյալի հիմքից, տե՛ս 3. 3. 3.) եւս քր. 1, 200. հրոյ գտակ (Աւգ. ignis inventor), Խոր. 1.6 և այլն, 2) գիտակ¹⁸ (գիտեմ) Գործ. 36.3 Կառար, Դատ. 2.7. որ գիտակ լեալ էին Եզր. Երանան (տե՛ս 3.1.1.), 2 Պետր. 1.20. Կառարան (partic. praes. act.), 2 Յովհան. 1. Երանան (partic. perf. act.) (տե՛ս 3.1.1.), Վեցոր. 9, 288. Երանան (partic. praes. act.), 3 Յովհան. 1. Երանան (partic. perf. act.) (տե՛ս 3.1.1.), Վեցոր. 9, 288. Երանան (partic. praes. act.), 4 լողակ (լողամ) տարբերակներ՝ լողակ (լողամ), լողակ (լողիմ), Յայտ. 8.9. Սատակեցաւ երրորդ մասն լողակաց։ Եւ Երանան Եւ Երանան Եւ Երանան Եւ Երանան (ածական, տե՛ս 4.3.), Իմաստ. 19. 18. լողակը Երանան, 5) խնդրակ (խնդրեմ) Յեսու. 2.7. խնդրակը Երանան (partic. praes. act., տե՛ս 3.1.1.), Յեսու. 2.22. Երանան խնդրակը Երանան (տե՛ս 3.1.1.), Յուդիթ 9.16. Երանան, 6) խուղակ (խուղեմ), Ոսկ. մ. 2.7. (32), 493. խուղակ լինել Երանան Երանան, PG, t. 57, in Mtth. hom. 32. col. 383, (տե՛ս 3.1.1.), 7) ջրասողակ (ջրարսողիմ) Փարպ. 10.26, 8) սխալակ (սխալիմ) Եսայի. 34.29. Իբրեւ զարբեալն և զսխալակ... Եւ Երանան Եւ Երանան (partic. praes. act.). այս օրինակում ուղարկվել է -ակ-ով դործող անձի անվան և դերբայի զուգահեռ կիրառությունը. երկուսն էլ համապատասխանում են հունարեն ներկա(ակտիվ) դերբային, 9 պաշտակ (պաշտեմ) Եսու. 2.7. Երանան (տե՛ս նաև՝ 3. 4. 1.), 10) ցուցակ (ցուցանեմ, անցյալ կատարյալի հիմքից, տե՛ս 3. 3. 3.) Փարպ. 93. Զոր փրկիլն Քրիստոս ընդ նոսին իսկ առաքեալ էր զցուցակ և զյայտնիլ աշխարհի՝ զանձուն մեծի... 96... որ լինելոց էր ցրիլ և խայտառակիլ թագաւորին Երանան, և ցուցակ և բաշխիլ մեծի և երկնաւոր զանձուն սրբոյն¹⁹։ Հմմտ. «ցուցակ» բառի զուգահեռ օգտագործումը -իլ-ով դործող անձի անունների հետ միասին, որը խոսում է նրա՝ դործող անձի անուն լինելու մասին (տե՛ս նաև՝ 5. 2. 2.)։

3. 3. Գործող անձի անվան իմաստ ունեցող -ակ-ով հունարեն նորակազմությունների մեծամասնությունը կերտվել է Փիլոն Ալեքսանդրացու հայերեն

¹⁷ Այս մասին մանրամասն տե՛ս K. Brugmann. Op. cit., S. 614.

¹⁸ Այս բառի (նաև՝ գտակ, խուղակ)՝ որպես դործող անձի անվան, մասին առաջին անգամ գրել է Եսու երկուսից, Հյուսիսային. տե՛ս H. Hübschmann. Ossetische Nominalbildung.—ZDMG, 41, S. 327.

¹⁹ Բնագիրը օրինակներով ծանրաբեռնելուց խուսափելու համար մենք սահմանափակվում ենք հիմնականում վաղ մկայություններով։

²⁰ Կ. Մուրադյանի հրատարակած բնագրում առկա է «խելապատիկ» ընթերցումը, սակայն նշված հատվածն օգտագործվել է «Պիտոյից գրքի» հեղինակի կողմից, որտեղ կարդում ենք «խելապատակ» (Ե, № 4, Բ)։

²¹ Բառը ճիշտ է հասկացել դեռևս 1869 թ. Փարպեցու ֆրանսերեն թարգմանության հեղինակ Լանդուան (Collection des historiens anciens et modernes de l'Arménie. t. II, Paris, 1869). «Mais Jésus, le Saviour, avait déjà envoyé avec eux celui qui devait montrer et reveler au monde ce grand trésor (p. 310). celui qui devait aneantir et flétrir l'ordre du roi et qui devait propager et distribuer le grand et celestre trésor de aints» (p. 312)։ Հմմտ., սակայն, աշխարհարար թարգմանությունը՝ «Փրկիլն Քրիստոսը նրանց հետ ուղարկել էր աշխարհին հայտնի մեծ զանձի օրինակը (՝) (Դ ա զ ա ր Փ ա ռ ա զ ե թ ի. Պատմություն հայոց, աշխարհարար թարգմանությունը և ծանոթագրությունները Բ. Ուլուբաբյանի. Երևան, 1982, էջ 223)։ «...որը լինելու էր թագավորի հրամանի տարածողն ու խայտառակողը, սրբերի մեծ և երկնավոր զանձերի հավաքողն (՝) ու բաշխիլը» (էջ 231)։

թարգմանություններում: Այդպիսի բառաստեղծման օրինակ էին հանդիսացել, անշուշտ, վերը թվարկված բառերը, որոնցից չորսը (շահված «ցուցակ» բառը, որն օգտագործվել է գոյականի իմաստով. տե՛ս 5. 2. 1.) ավանդված են Փիլոնի թարգմանություններում. Փիլ. ալլաբ. 151, շն. 280՝ գտակ երգչիչ, Փիլ. բագն. 216՝ դուդակ բաղչիչ, Փիլ. լին. 3.43՝ խողակ (Աւգ. inquires), Փիլ. շն. 281՝ գիտակ երգչիչ, վերջին դեպքում «գիտակ»-ը օգտագործված է «տեսանող» ենթակայական դերբալի հետ դուգահեռ:

3. 3. 1. Հունարան թարգմանություններում ավանդված -ակ-ով նորակազմությունները հետևյալներն են՝

1) արարակ (անենեմ, անցյալ կատարյալի հիմքից, տե՛ս 3. 3. 3.) Տիմ. Կուզ. 21. 3, հմմտ նաև՝ անարարակ, Տիմ. Կուզ. 21. 2, 2) բարեգործակ (բարի + գործեմ)՝ Փիլ. բագն. 207՝ բարեգործակ և սատակիչ երգչիչ, առաջինը (հմմտ. 3.2. № 10), Տիմ. Կուզ. 22.7, 3) բուժակ (բուժեմ) Փիլ. լին. 3.10 (Աւգ. curator), 4) գործակ (գործեմ) Փիլ. Ժ բան. 224. երգչիչ, 5) երգակ (երգեմ) Փիլ. լին. 3.3. (Աւգ. cantator), 6) ընդունակ (ընդունիմ) Բրս. շար. Կիրդ. գնձ., Տիմ. Կուզ. 27.33, 113.4, 119.31, 241.9, Փիլ. տեսական 7՝ անընդունակ ձեռնարկ (հմմտ. ալլաբ. 115. անբաժ. ձեռնարկ), Պիտ. 228, Տիմ. Կուզ. 276.22, Մահմ. 3.32.18՝ Մարդ է կենդանի... մտաց հանճարի ընդունակ՝ Ανδρωπος εστι ζωον... επισημης δεχαισεν. Այստեղ իմաստալից պատճենում է տեղի ունեցել. հունարեն բառի «ընդունակ» փոխաբերական իմաստը փոխանցվել է հայերեն բառին, դառնալով հետագայում նրա միակ նշանակությունը: 7) իմաստասիրակ (իմաստասիրեմ), Փիլ. ել. 2. 120 [փնտրեմ?] 8) իմաստակ,²² Փիլ. տեսական 6 և ալլաբ. 20, 9) խողակ (խողամ) Փիլ. լին. 4.188 (Աւգ. ludens, i. e. puer), 10) խորհրդակ (խորհրդեմ) Փիլ. բագն. 211. խորհրդակ բաժնի, 11) կրթակ (կրթեմ) Փիլ. իմաստ. 42. կրթակ և վարժիչը ձեռնարկ: Ուշագրավ է, որ հունարեն ձեռնարկ բառը թարգմանված է -ակ -ով և -իչ -ով երկու գործող անձի անունների կապակցությամբ:²³ 12) դողակ (դողեմ) Փիլ. լին. 6. լին. 159, 13) մոլորակ (մոլորիմ), Փիլ. ել. 2.79. լին. 14) լուսավորակ (լուսալուսեմ), Փիլ. լին. 2. [լուսավորեմ?], 15) նախակրթակ (նախակրթեմ) Փիլ. լին. 1, 50 [լուսավորեմ?], Պիտ. 328, 16) լուգակ (լուգեմ) Աթ. և., Կոչ. Ժր, 17) նախահոգակ (նախահոգամ), Առ որս., 18) նախունակ (նախ + ունիմ) Դիոն. ածալ.՝ գիտող... նախունակ, հալաբիչ և նախունակ (հմմտ. № 2), 19) քարոզակ (քարոզեմ), Փիլ. ել. 2. 76, 20) շարունակ (շար + ունիմ), Դիոն. ածալ.՝ կատարող և շարունակ (հմմտ. № 2, 18), 21) ողբերգակ (ողբերգեմ) Փիլ. լին. 3. 211 [ղբերգեմ?], 22) պարաուրակ, (պարաուրիմ) Փիլ. տեսական 31. շոքեղ, 23) վերելակ (վեր + ելանեմ, անցյալ կատարյալի հիմքից, տե՛ս 3.3.3.) Փիլ. ալլաբ. 176. ձեռնարկ, Պիտ. 9, 24) վրիժակ (արևան) Փիլ. քն. 200 ձեռնարկ (հմմտ. № 8), 25) քնարերգակ (քնար + երգեմ) Առ որս., է, [լուսավորեմ?] 26) վերագիտակ (վերագիտեմ) Կիրդ. լին.:

²² Չնայած լեզվում բացակայում է հիմք բայը, սակայն թարգմանիչը հավանաբար ի նկատի է ունեցել *իմաստիմ (հմմտ. ձեռնարկ-ձեռնարկ) ձևը:

²³ Հարկ ենք համարում նշել, որ հունարեն մեկ բառի թարգմանությունը երկու միմյանց լրացնող բառերով հատկանշական է Փիլոնի երկերի թարգմանությանը (որ դասական թարգմանություններում հաճախ կիրառվող ձև է): Այդ մասին տե՛ս նաև՝ A. Terian. Philonis Alexandrini De animalibus, The Armenian Text with an Introduction, Translation and Commentary. Michigan, 1981, p. 10.

3. 3. 2. Մեր հետալուստության առարկա բառակազմական կաղապարի ակտիվացումը հունաբան դպրոցի թարգմանիչների կողմից հիմք ստեղծեց ինքնուրույն երկերում նույնօրինակ կաղամբյունների կերտման համար. հմմտ. օրինակ՝ 1) Պիտ. 204, 214՝ ելուզակ (եկուզանեմ, անցյալ կատարյալի հիմքից, տե՛ս 3. 3. 3.), «ավազակ», 57, 58, 61՝ կատակերգակ (կատակերգեմ) [առաջինը], 243՝ հաուակ (հաուիմ, Պիտ.), 32, 412՝ նախագտակ (նախ + գտանեմ) [առաջինը], 123՝ պարտակ (պարտիմ), 131՝ վրիժագործակ (վրիժ + գործեմ), 2) Անանիա Շիրակացի. զուգաբերակ (հմմտ. զուգաբերիմ, Պղատոն. օր, Արիստ.), մուրակ (մուրամ), յառաջահոգակ (հմմտ. Փիլ. լին. 2, 69՝ յառաջահոգամ), 3) Գրիգոր Նարեկացի (Նար.). մծբ.՝ ունակ (ունիմ), խչ.՝ սիրատենչակ (սեր + տենչամ), 4) Գրիգոր Մագիստրոս (Մագ.) պապչեակ (պապչիմ), վրջնապապչեակ և այլն.

3. 3. 3. Անցյալ կատարյալի հիմքից -ակ-ով կաղամբյուններ հանդիպում են միայն -ան ածանց ունեցող բայերից. հմմտ.՝ գտանեմ—գտակ, ցուցանեմ—ցուցակ, եկուզանեմ—եկուզակ, ելանեմ—վեր-ելակ և այլն: Այս երևույթը կարելի է բացատրել -անակ բարդ ածանցի ստեղծումից խուսափելու միտումով, քանի որ այն ձևով կհամընկներ այլ իմաստային երանգներ ունեցող -անակ վերջածանցի հետ:

3. 4. Անմիջականորեն իրանականից փոխառնված գործող անձի անուններ՝ 1) բաժակ, Մտթ. 10. 42, 2 Թագ. 12. 3 <*bāzak (<*bā) «բաժանել»²⁴, 2) գուշակ, 2 Մակ. 13. 28, 1 Կորնթ. 10. 28 և այլն, հմմտ. հին պրսկ. gaušaka-, «լրտես, ականջ զնող», արամ. gawšk²⁵ (սույն բառը կարող էր թափանցել հայերենի մեջ հին իրանական լեզվական զարաշրջանում²⁶), 3) դերձակ, Ոսկ. եփես. <*darzak (<*darz- «to make firm»²⁷), 4) մահակ, Ոսկ. ճառք 395 և այլն <*mahak (<*man) «շարժել, թափահարել» հմմտ. սողդ. mnd-)²⁸, 5) նուիրակ²⁹ Գործք. 16.38. 𐭠𐭣𐭥𐭭𐭥𐭭𐭥𐭭, Վեցօր. 5.132.4, Եղիշէ 8.201.4 և այլն <*nivēdak (<*ni-vaid-): «նուիրեմ» բայը բերված ձևի համար չի կարող լինել հիմք բայ, քանի որ վերջինիս իմաստը չի հանգում բայի իմաստին: Իմաստային անհամատեղությունը բացատրվում է այն հանգամանքով, որ «նուիրեմ» բայը կիրառվել է որպես հունարեն πείνω բայի թարգմանություն (Մեն. 35. 14, Ելք 30. 10, Թիւ. 29. 7 և այլն), 6) պատմունձակ «հանդերձապետ» 4 Թագ. 22.14. *patmōcāk, հավանաբար, «հաղցնող», 7) վարձակ³⁰ «պարուհի երգչուհի», 2 Թագ. 19. 35. 𐭠𐭣𐭥𐭭𐭥𐭭𐭥𐭭 <*varzāk (<*varz- «անել, գործել»):

²⁴ Գործող անձի անունների կաղամբում nomina instrumenti-ի տեղի մասին տե՛ս Brugmann. Op. cit., S. 481, 2a, S. 609, 610.

²⁵ E. Benveniste. Éléments Parthes en Arménien. — REA, t. 1, 1964, p. 9.

²⁶ R. N. Frye. Continuing Iranian Influences on Armentan.—In: Yad-Name-ye iraniye Minorsky, Tehrān, 1969, p. 85. Իրանականում և հայերենում այդ բառի նշանակության մասին տե՛ս E. Benveniste. Op. cit., p. 9—11, M. Leroy. Emprunts iraniens dans la composition nominale en arménien classique.—REA, t. XVII, 1983, p. 57.

²⁷ H. W. Bailey. Prolexis to the Book of Zambasta. Cambridge, 1967, p. 117.

²⁸ E. Benveniste. Manth- en Iranien.—Indo-Iranian Journal, v. VII, 1964, 4, p. 307—309; H. W. Bailey. Op. cit., p. 274.

²⁹ Այս բառի տարբեր իմաստների մասին տե՛ս ԱԲ, III, էջ 113—134, 470—471, IV էջ 664: Այն ավանդված է պարթևերենում և սողդերենում. հմմտ.՝ պարթև. nwyāc «հրավեր», սողդ. nwyōc- «հրավիրել». այդ մասին մանրամասն տե՛ս W. B. Henning. A List of Middle Persian and Parthian Words.—BSOAS, IX/1, 1937, p. 85: Այս բառի իմաստային զարգացման երանդների մասին տե՛ս W. Eilers. Der alte Name des persischen Neujahrestes — Abh. der Geistes- und Sozialwissenschaftlichen Klasse. Wiesbaden, 1953, Nr. 2, S. 67.

³⁰ Կապ չունի «վարձեմ» բայի հետ:

dijsakā «բռնող», jsinākā «սպանող, մարդասպան» trāyākā «փրկիչ» և այլն.³⁸ Երկար ձայնավորով -āk (մանիք. -ag) ածանցի տարրերակը հետագայում ընդհանրացել է արևմտյան միջին իրանական լեզուներում.³⁹ Հմմտ. պահլավերենում՝ gazāk «կծող», bozak «փրկող», dārāk «բռնող», ravāk «գնացող», մանիք. միջին պրսկ.՝ nywš'g «լսող» (<*ni-gauša-), twxš'g «ջանող», պարթևերենում՝ ngwš'g «լսող», w'd'g «առաջնորդ» և այլն: Հրատարակված մանիքեական միջին պարսկերեն և պարթևերեն բնագրերում մեզ միայն մի անգամ է հանդիպել ածանցի կարճ ձայնավորով կազմված գործող անձի իմաստ ունեցող բայանուն, որ, սակայն, նաև գրչական սխալի արդյունք կարող է լինել՝ U 'yn mry m'ny dyn 'c hrw'gwc w'd'g 'wd prwrzg wynd'h (T II D II 134 R II, 164-166) «Եվ սրպիսզի Մանի տիրոջ այդ կրոնը ամենուր առաջնորդներ և կողմնակիցներ գտնի»:

Երկար ձայնավորով nomen agentis-ի իմաստով ածանցը գերակշռում է նաև ժամանակակից իրանական լեզուներում. նոր պրսկ. -a (<-ak)՝ porsā «հարցնող», բելուշ. -ōk, -ūk, -ōx, (<*āka)՝ t'ursox «երկչոտ», varox «ուտող», girok, -ūk, -ōx, «կայծակ» (բառացի «բռնող»⁴⁰), քրդերենում. -ōk (<*āka)⁴¹ garōk «թափառող», xāpok «խաբող», gazōk «կծող» <*gaza-ka-⁴² xwarok «ուտող» <*xvaraka-: Քրդերենում հազվադեպ այդ նշանակությամբ հանդես է գալիս նաև -ak? (<*āka) ածանցը՝ birak «կտրող»⁴³: Օսերենում վկայված են ածանցի երկու տարրերակ էլ՝ 1) կարճ ձայնավորով -āg <*āka, 2) երկար ձայնավորով՝ -ag <*āka. 1) marāg «մարդա-

³⁸ Sб'с Л. Г. Герценберг. Хотано-сакский язык. М., 1965, с. 73.

³⁹ Զայնավորի երկարության ծագման մասին մանրամասն տե՛ս Գ. С. Асатрян. Указ соч.; A. Debrunner. Op. cit., § 150c, S. 267: «Die Herkunft der Endung ist dunkel.»

⁴⁰ W. Geiger. Op. cit., S. 25.

⁴¹ F. Justi. Kurdische Grammatik. StPb, 1880. S. 30.

⁴² *gaz- (հմմտ. միջ. պրսկ. gazāk) արմատի մասին տե՛ս H. W. Bailey. A Range of Iranica.—In: W. B. Henning Memorial Volume. London, 1970, p. 26-27. Այս արմատից է ծագում նաև հայերեն «ղազան» (<իրան. *gazān կամ *gazāna-) բառը (տե՛ս նույն տեղում):

⁴³ Քրդերենի հյուսիսային բարբառում ավանդված է սահմանափակ կիրառություն ունեցող գործող անձի անվան ոչ պրոդուկտիվ -ōγ/-ōx ածանցը, որ հանդիպել է մեզ առաջին անգամ Ավետարանի քրդերեն թարգմանության բնագրում, որը լույս է տեսել 1857 թ. Կոստանդնուպոլսում: Հմմտ. օրինակ wî jî wirā gōtōx-ra civab da û gō (Մտթ. 12. 48, բնագիրը բերվում է բաղրիսանյան քրդերեն այբուբենով): Այդ ածանցը չայնոբեն կիրառվում է ներկա դերբայի կազմության համար և զաղայերենում, որ տարածված է Դերսիմում և մերձակա շրջաններում. հմմտ. āmayōγ «կող», kārōγ «անող», štyāyōγ «գնացող» և այլն (տե՛ս K. Haddank. Mundarten der Zāzā. Berlin, 1932, S 89): Ինչպես քրդերենում, այնպես էլ զաղայերենում -ōγ ածանցը հայերենից փոխառնված ձևով է (-ող) և ոչ բնիկ -ōk-ի (քրդերենում <*āka) շփական տարբերակը: Այդ է վկայում ոչ միայն նույն բնագրի սահմաններում երկու ածանցների զուգահեռ կիրառության փաստը, այլև այն հանգամանքը, որ բնիկ -ōk-ը գործող անձի անուններ է կազմում ներկայի, իսկ -ōγ-ը՝ անցյալի հիմքից: Քրդերենի քերականությանը նվիրված գրականության մեջ այդ ածանցը ուշադրությունից դուրս է մնացել, որ, հավանաբար, բացատրվում է նրա սահմանափակ կիրառությամբ: Ինչքան մեզ հայտնի է, այն բերվում է միայն հետևյալ աշխատության մեջ՝ E. Dj. Bédir Khan, R. Lescot, Grammaire Kurde. Paris, 1970, p. 291 (çêkirōx «անող»):

սպան», kaxag «ղալթակղիչ», 2) k'ardag «կտրող» cavag «թափառող», t'arsag «վախկոտ» և այլն:⁴⁴

Այսպիսով, երևելով այն հանգամանքից, որ արևմտյան իրանական լեզուներում տարածված էր երկար ձայնավոր ունեցող ածանցը, կարող ենք ենթադրել, որ գործող անձի անվան իմաստ ունեցող -ակ ածանցը հայերենում արտացոլում է միջին արևմտյան իրանական համապատասխան երկար ձայնավորով ածանցը, թեև ինչպես իրանական երկար, այնպես էլ կարճ ձ-ն իոնաոթյան դեպքում հայերենում միևնույն արտացոլումն են գտնում⁴⁵:

4. 1. -ակ ածանցով կազմված ածականները դասակարգելիս կարելի է մատնանշել երեք բառակազմական կաղապար՝ կախված հիմք բառից:

4. 2. Դոշականներից կազմված ածականները համեմատաբար սակավաթիվ են՝ արդակ (արգ) Փիլ. բազն. 205, Սամփս.⁴⁶, անարդակ, Մագ., հմմտ. նաև՝ մակարդակ Արիստ. επιμαρτυς, բանակ (=բանական), Փիլ. ել. 2. 111 [ἰσχυρός?] Նոնն. 234, բնակ (բուն) «հատկանշական» Ղևտ. 13.51, 52, 14.44, (տե՛ս 5.5.), երկաթնակ (բուն) Տիմ. Կուղ 36.10 [δυσπαιτός?], միջակ (մեջ) Սահմ. 37.28.10 το μετὰ, վատատոհմակ (տոհմ) Փարպ. passim, վրիպակ (վրէպ), 3 Մակ. 5.23, Փիլ. իմաստ. 102. սխալ և վրիպակ πρῶτος (տե՛ս ծան. 23), փախստակ (փախուստ) Շ. Եղեռ.:

4. 3. Քանի որ ածականների կատեգորիան իր իմաստով բավականին մոտ է գործող անձի անուններին⁴⁷ (դերբայների գոյականացումը (տե՛ս 3.1.1.) սկզբունքորեն անցնում է աղյեկտիվացիայի աստիճանով), -ակ-ով բաղաձայնների առանձնացման շափանիշ ենք համարում առաջին հերթին նրանց որոշիչի ֆունկցիան ի տարբերություն գործող անձի անունների սուբստանտիվ կիրառության և նրանց հատուկ բայական իմաստի, որն արտահայտվում է երբեմն գործող անձի անվան լրացում հանդիսացող սեռական հոլովով խնդրի (genetivus objectivus) առկայությամբ:

Ախորժակ (ախորժեմ) Փարպ. 12, 56, 174 (տե՛ս 5. 2.), աւերակ (աւերեմ), Փիլ. լին. 4. 4 (տե՛ս նաև 5. 2.), բաւակ (բաւեմ), Սեբեր. Ե, գործակ (գործեմ) Փիլ. ալլար. 177. πωλετός, (տե՛ս 3.3.1 № 4) =գործական, երեւիվակ (երեւիմ) Ոսկ. գծ, Պղատ. օրին. տ., նար. հե, հմմտ. նաև նախ-երեւակ, Դիոն. երկն., կամակ (կամիմ) «հաճելի» Պտմ. Աղեքս, Փիլ. տեսա-կան, զժկամակ, 2. Թագ. 19.՝ ընդէր զժկամակ եղեր վասն... το δὲ αὐτοῦ ἐνέμειπε... և այլն, նախագողակ (նախ+գող), Պիտ. 432, շարունակ (շար+ունիմ), Սահմ. 17, 128. 3 πρὸς γὰρ (տե՛ս նաև 3.3.1. № 18), պարարակ (պարարեմ)⁴⁸ Ղուկ. 15.23, 27, 30 և այլն, պարունակ (պար+ունիմ), Դիոն թղթ. [περιγίγς?]:

4. 4. Ածականներից -ակ ածանցով կազմված ածականները հիմնականում իրենց նշանակությամբ նույնանում են հիմք բառի հետ, սակայն հավանաբար օժտված են մեզ համար ինչ-որ անըմբռնելի իմաստային նրբերանգով. նրանք ավանդված են հիմնականում հունարան և ուշ գրականության մեջ: Աղատակ (=աղատ) Փիլ. շն. 269՝ աղատակս εὐχόμενος

⁴⁴ H. Hubschmann. Op. cit., S. 326, 330.

⁴⁵ Տե՛ս նաև G. Bolognesi. Op. cit., pp. 15—16.

⁴⁶ Հնարավոր է, որ «արդակ»-ն առաջացել է նույն՝ Փիլոնի թարգմանչի ձեռքով կերտած «արդեմ» բայից:

⁴⁷ Այդ է պատճառը, որ որոշ բառերի վերաբերյալ տարաձայնություններ կարող են առաջանալ, ինչպես, օրինակ՝ «սխալակ» բառը մենք դիտում ենք որպես գործող անձի անուն, իսկ Ա. Ս. Մուրադյանի գրքում այն բերվում է որպես ածական (նշվ. աշխ., էջ 307):

⁴⁸ պարար-ի ստուգաբանության մասին տե՛ս Ա. Benveniste. Etudes sur la langue ossete. Paris, 1959, p. 99, նույն տեղում նաև՝ պարարակ (veau) gras՝ σιγαύρος.

(gradus super!), անճարակ (=անճար) Նար. բ՛, Մխ. բ՛ չկ., աստուածասի-
րակ (=աստուածասէր) Փիլ. բազն. 204-205 *φύλαξ*, արդարակ (=արդար)
Պտմ. Աղեքս 122, Փիլ. ել 1.1., Պիտ. passim (տես նաև 5.4.1), բոլորակ
(=բոլոր) Ելք. 28.32 և այլն (տես նաև 5.4.1), երեքնակ (=երեքին),
Փիլ. Ժ. բան. 228 *τρίπλοος*, իմաստասիրակ (=իմաստասէր), Փիլ. լին 1.57,
Ել. 2. 120, բազն. 204 *φύλαστος* (3.3.1. № 7), անիմաստասիրակ, Փիլ. իմաստ-
62 *ἀφελος* (որպես մակբայ), կրկնակ (կրկին), Փիլ. Ժ. բան. 228 *διπλος*,
ալլար. 115 *διπλος*, Իրեն. հերձ. 141 *διπλοος*, հանգիտակ (հանգէտ) Շնման,
հավասար» Սոր. 3.62, հրեղինակ (հրեղեն), Գնձ., ներալլակ (ալլ) Թեոն.
182 *εναλος*, սոնասիրակ (սոնասէր) Գր. սք.ի ստեփ. [*φύλαστος*?], ուժգնակ
(ուժգին), Բրս. հց., ստորնակ (ստորին) Փիլ. ել. 2.11., ճարտարակ (ճար-
տար) Ոսկ. իրիլիպ. է, ստտակ (ստտ) «ստախոս» Բուզ. 12:

4. 4. 1. Որոշ հետազոտողների կարծիքով -ակ ածանցը, միանալով ա-
ծականներին, ցույց է տալիս հատկության մասնակիություն⁴⁹: Բերվող օրի-
նակներից ամենահատկանշականը «կապուտակ» բառն է (մնացած բառերը
պատկանում են մեր դասակարգման 4. 4. կետին):

Սակայն վերոհիշյալ դատողությունը, որ հիմնված է ՆՀԲ-ի տված նշանա-
կություններից մեկի («բաց կապույտ, երկնագույն») և այդ բառի՝ ժամանակա-
կից հայերենում ունեցած իմաստի վրա, չի արդարացվում ինչպես ա) բառի
ստուգաբանության, այնպես էլ՝ բ) բնագրային նյութի տվյալներով:

ա) բառն ամբողջությամբ իրանական փոխառություն է. հին պարսկերե-
նում այն հանդես է եկել որպես գոյական. *kapautaka* (*kasaka* *haya* *kapau-*
taka) DS f 37 «Lasulith» (ինչ-որ թանկարժեք քար է), բ) Աստվածաշնչի
բնագրում այն քառամյթ անգամ հանդես է գալիս որպես գոյական, որով
թարգմանված է հուն. *ἰσχυρίτης*⁵⁰ բառը (Ելք. 25.4, 1, 31, 36, 27. 16, 28.5,
35.23, 35, 36.8, 19, 35, 37, 28.18, 23, 31, 29.2, 3, 5, 8, 19, 20, 22, 28, Երեմ.
16.5, 9, Եղեկ. 27.7, տե՛ս նաև՝ Վեցօր. 4.120, 3): Սկզբնապես գոյական լինե-
լով՝ «կապուտակ» բառն օգտագործվել է նաև ածանակերպ. տասնմեկ անգամ
Աստվածաշնչում նրանով թարգմանված է հուն. *ἰσχυρίτης* ածականը (Ելք.
26.14, 28.31, Թիվ. 4.6, 8, 9, 10, 11, 12, 14, 15, 5.38) և մեկ անգամ *πεπλος*.
ածականը (Առակ. 23.29. հմմտ.՝ նյութ ցույց տվող գոյականի ածականա-
կերպ կիրառությունը՝ «վահանակ ոսկի» Ելք. 39.16): Ի դեպ, *ἰσχυρίτης* ածա-
կանը երբեմն թարգմանվում է «կապուտակեայ» ածականով (Թիվ. 4.26, Ելք.
26.4, 36.11, 39.30, 33): «կապուտակ» բառի գոյական լինելու մասին է վկա-
յում նաև հետևյալ բառերի առկայությունը՝ կապուտակագոյն (Ագաթ., Նիւս.
կազմ), կապուտակագործ (Ոսկ. ես.), կապուտակային (Պտմ. Աղեքս.) կապու-
տակեալ *ἰσχυρίτης* (Ելք. 35.23):

4. 4. 2. Մի շարք ածականների համար դժվար է որոշել, թե որն է նրանց
հիմք բառը, քանի որ գիտակցվում է նրանց կապը ինչպես ածականի հետ,
որին մոտ են իրենց իմաստով (հմմտ. 4. 4.), այնպես էլ նույնարմատ բայի
հետ (հմմտ. 4. 3.): Վերջին կապն արտահայտվում է այն բանում, որ այդպի-
սի ածականներն ունեն գործող անձի անվան իմաստային երանգ. անազդակ
(անազդ, անազդեմ) Փիլ. Նխ. I, աջողակ (աջող, աջողեմ) Դտ. 3. 15, Պիտ.
254 և այլն, աստուածախօսակ (աստուածախօսեմ) Խոսր., խառնակ (խառն,
խառնեմ) Գործք. 14. 28 և այլն. *χρυσός*, Փիլ. իմաստ. 35 և Սահմ. 3. 32. 18.

⁴⁹ Ս. էլ ույ ա ն. նշվ. աշխ., էջ 123: Մ. Աբեղյանի կարծիքով (նշվ. աշխ., էջ 194) ընդ-
հակառակը՝ -ակ ածանցը ածականների նշանակությունը սաստկացնում կամ ձեափոխում է:
Տե՛ս նաև՝ Ա. Ա. Մ ու ռ վ ա լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 307:

⁵⁰ «A precious stone of blue colour, perh., aquamarine». Liddlell, Scottt. Greek-
English Lexicon. Oxford, 1968, s. v.

10 «Հանդես», № 3

ἡμετέρας, նմանակ (նման, նմանեմ) Շ. յկ. իբ և այլն, նաև աննմանակ (= ան-
նման) Տօնակ., ձախողակ (ձախող, ձախողիմ) Փիլ. բաղն. 206:

4. 5. Կան նաև իրանականից անմիջապես փոխառնված ածականներ, որոնք
կազմված են անվանական և բայական հիմքերից՝ -ak(<*aka) ածանցով.
անապակ (դինի) Սղ. 22. 5, Երեմ. 27. 15, Յայտ. 14. 10 և այլն «անջուր, ան-
խառն» <*anapaka- «անջուր», արձակ <*harz-aka- և այլն:

4. 6. Հնդիրտնական լեզուներում -aka ածանցի օգնությամբ ածական-
ներ էին կազմվում տարբեր հիմքերից. հմմտ սնսկր. antaka (anta) «վերջ
գնդ», sucika(sūci) «ծակող», andika(andi) «ծու ածող», օսերեն՝ xajairag
«տնային», āfsālnag «երկաթյա» և այլն:⁵¹

5. 1. Որպես գոյականակերտ ածանց -ակ-ը միանում է տարբեր հիմքե-
րի հետ, ըստ որում, ինչպես գործող անձի անունների կերտման գործում,
այնպես էլ այստեղ, նշանակալի է հունաբան դպրոցի դերը՝ դասական լեզվից
փոխառյալ բառակազմական կաղապարների ակտիվացման գործում:

5. 2. Դասական բնագրերում ավանդված բայանուններ՝ աերակ (աե-
րեմ) Սգր. passim (տե՛ս նաև՝ 4. 3.), հասակ (հասանեմ, անցյալ կատարյալի
հիմքից, տե՛ս 3. 3. 3.) Երեմ. 48. 37, Ղուկ. 19. 3, Վեցօր. 5, հիսակ
(հիսեմ) Ոսկ. մ. 2. 24, վրիպակ, (վրիպեմ) 2 Թագ. 6. 9. σὺνπαύρᾳ և այլն
(տե՛ս նաև՝ 4. 2.):

5. 2. 1. Հունաբան և ուշ գրականության մեջ ավանդված կազմություն-
ներ՝ ախորժակ (ախորժեմ) Փիլ. իմաստ. (տե՛ս 4. 3.), գոյակ (գոյ) Նիւս. երգ.
[τα ὄντα?], երկամիջակ «հասարակած» Շիր. զաակ., էակ (է) Անլ. Պորի. τὸ
ὄν, τα ὄντα, Տիմ. Կուգ. 22.19, Նար. շ., նաև՝ անէակ, Սանահն., Նիւս. կազմ.,
Նար., ինքնէակ, Բրս. հգ., Փիլ. լին. 3.39, կոտորակ (կոտորեմ) «փշրանք»
Բրս. մրկ., նախնական (նախ+եղանիմ, անցյալ կատարյալի հիմքից, տե՛ս
3.3.3.) Նիւս. երգ. [τα πρὸντα?], ըմպակ (ըմպեմ) ՅՏ. կթղ. 158, 28, նոտի-
րակ (նոտիրեմ) Փիլ. Ել. 2.71 [πρὸντα?]. շաղառակ (շաղ+առնում, անց.
կատ. հիմքից) Թր. քեր. 23 σὺλλεψις, ոլորակ (ոլորեմ)⁵³ Թր. քեր. 3, 38.
τὸνός, տե՛ս նաև՝ համոլորակ, Փիլ. լիւս. 171. [σὺντονος?], պարունակ (պար+
ունեմ) ՃԳ (տե՛ս նաև՝ 4.3.), վիժակ (վիժեմ) «հոսանք» Նար. կգ. մծբ.,
տեսակ (տեսանեմ, անցյալ կատարյալի հիմքից, տե՛ս 3.3.3.) Թր. քեր. 13,
Փիլ. ալլար. 146. εἶδος, տեսական 7. εἶδα և այլն, տե՛ս նաև՝ աստուածատե-
սակ, Առ. որս և. է [ὁσεῖστος?], դժոխատեսակ, Բրս. հայեաց. [ὁσεῖστος?],
ցուցակ (ցուցանեմ, անցյալ կատարյալի հիմքից, տե՛ս 3.3.3.) Փիլ. Ել. 2.52
(Առգ. indicium), Փարպ. 169.40 (տե՛ս 3.2 № 10):

5. 3. Նվաղական իմաստից է զարգացել, հավանաբար, -ակ ածանցի գո-
լականակերտ իմաստը, որն արտահայտվում է գոյականների հետ հանդես
գալու ընթացքում: Այդպիսի դեպքերում ածանցը ավելի նեղ, կոնկրետ իմաստ
է հաղորդում հիմք բառին⁵⁴ անրակ (անուր «վզնոց») Յոր. 31. 22, գնդակ
(գունդ) Վեցօր. 5. 145. 11, 147. 5 և այլն, երամակ «կենդանիների հոտ»

⁵¹ Whitney. Op. cit., § 122c, p. 467; Debrunner. Op. cit., S. 522; Hüb-
schmann. Op. cit., § 17 c, S. 332.

⁵² Այս բառն Աստվածաշնչում թարգմանված է «նուիրանոց» (Թիւ. 4. 7):

⁵³ Ա. Մուրադյանը (նշվ. աշխ., էջ 305) որպես հիմք բառ է ընդունել «ոլոր» գոյականը:

⁵⁴ Հմմտ. ժամանակակից հայերենում՝ Ա. Ա. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 307:
Ա. էլ ոյ ա ն. նշվ. աշխ., էջ 123:

(երամ «մարդկանց կամ կենդանիների խումբ») Սգր. *passim*⁵⁵, լծակ (լուծ) Թիւ. 13. 24, նոր. 1. 23, խոյակ (խոյ) «խոյի ձև ունեցող սյան գլուխ» Ելք. 40. 16. *καταλινος*, հրոսակ «ավազակ, ասպատակող» (հրոս «ասպատակություն» «հարձակում») Ոոր. 1.10, 35. կթ. *passim*⁵⁶ շրջանակ (շրջան) Ոսկ. և ալլն, նկանակ «որոշակի ձև ունեցող հացի միավոր» (նկան «թխված հաց») Սգր. *passim*⁵⁷ նշանակ (նշան) 2 Մն. 13.12. *σημασια*, եղեկ. 12.6, 11. *τερας*, որահակ «վարագույր» (սրահ) Ելք. 26.36. *επισπατρον*, վահանակ (վահան) Ելք. 2.813. *αποδωκτη*, տապանակ (տապան) Ելք. 40.3:

5. 3. 1. Մի շարք նման բառեր ավանդված են հունաբան գրականության մեջ՝ աղիւսակ (աղիւս) Փիլ. լին. 4. 27, Ել. 2. 37. [*πλινθιον*?] «փոքր աղիւս, աղյուսակ»՝ իմաստային պատճենման օրինակ է, երբ հունարեն նվազականի փոխաբերական իմաստը ստանում է նաև հայերեն նվազականը (հմմտ. 3. 1. 1. № 6), բուսակ (բոյս) Պիտ. Յաւել. 347, 441, կենդակ > կենդանակ (կենդանի) Փիլ. քհ. 180. *ζωδιον*, *ζωδιακος*, կիսակ (կէս) Մագ., Վրք հց. Ժ, կուտակ (կոյտ) Կոչ. Թ., սողնակ (սողուն) Վանակ. լոր. (փոխաբերաբար ստացվել է «դռան փակ» իմաստը՝ Յասմաւ, Կետ. 14), մակընթրակ (մակ + ընթրիք) Փիլ. տեսական 21. *επιειπνις*, նախընթրակ (նախ + ընթրիք) Պտմ. առ լեհ. [*προειπνον*?], նախատոնակ (նախ + տոն) Ածաբ, պասք. Փիլ. լիւս. 24. *προεορτος*:

5. 4. Ածականներից, մակբայներից և դերանուններից կազմված գոյականներ՝ ներքնակ «ներքին հագուստ» (ներքին) Ելք. 29. 5, պաղպաղակ (պաղ-ի կրկնություն) Վեցօր. 3. 76. 16, 20, մեկնակ (մեկին) Վեցօր. 1, 8, Եւս. պտմ. Ե, 25:

5. 4. 1. Հունաբան կազմություններ՝ արդարակ (արդար), Փիլ. ալլաբ. 166, Ժ բան. 60. *τα διατα*, Ժ բան. 256. *διαταρα* (տե'ս 4.4.), բոլորակ (բոլոր), Փիլ. Նիս. 1, Կիւրդ. գնձ. (տե'ս 4.4.), զանազանակ (զանազան) Թր. քեր. 23. *διαφορα*, ընդդիմակ (ընդդէմ) Փիլ. Ժ բան. 252, Պիտ. 4, 34. *εναντιον* և ալլն. որակ (որ) Փիլ. բագն. 213. *πρωτη*, Արիստ. ստորոգ. 29. 26. *πρωτον*, աւորակ Փիլ. ալլաբ. 117. *πρωτος*, քանակ (քանի) Փիլ. լին., Արիստ. ստորոգ. 109.27. *αδωτος*:

55. Իրանական փոխառություններ՝ աթաշակ, առձեռն բառ. <*ātašak* «սիֆիլիս» (*atas* «հուր»), բնակ <*bunak* «տուն, բնակատեղի» (ԱՅ. 1 էջ 457), Ծնն. 23.9, Մագ. և ալլն,⁵⁸ դիմակ, Ոսկ. մ. 1.1 <*dēmak* «տեսք, կերպարանք» (*dēm* «դեմք»): «Դիմակ» իմաստը, որ վկայված է Ոսկ. պող.

⁵⁵ «Երամ» բառի գոյությունը լեզվում կասկածելի է դարձնում, սակայն չի բացառում Հր. Աճառյանի (ԱՅ II)՝ երամակ բառի իրանականից անմիջական փոխառման մասին ենթադրությունը:

⁵⁶ X դարի հեղինակ Դրասխանակերտցին հավանաբար ընկալել է այդ բառը որպես գործող անձի անուն, քանի որ նրան է պատկանում «հրոսող» զուգահեռ նորակազմությունը (էջ 153). երկուսն էլ կարծես կերտված լինեն գոյություն չունեցող *հրոսեմ-բայից (հմմտ. 4. 3, տե'ս նաև «Իմաստիմ-իմաստակ, 3. 3. 1. № 7):

⁵⁷ Այս բառի մանրամասն իմաստաբանական վերլուծությունը տե'ս E. Benveniste. *Éléments Parthes en Arménien*, pp. 13—20.

⁵⁸ Զ. Բոլոնեզին (G. Bolognesi. Op. cit., p. 14) այն համարում է գործող անձի անուն՝ բունեմ (Սգր. *passim*) բայից—*abitature*, *abitante* «բնակվող, բնակիչ»։ Հավանաբար, այդպիսի դատողությունը հիմնված է այդ բառի ՆԶԲ-ում տրված առաջին նշանակության վրա, սակայն այնտեղ բերված վկայություններում «բնակ»-ը կարելի է դիտել որպես ածական (տե'ս 4. 2.):

299 և ընդհանրացել է ալդ բառի համար ժամանակակից հայերենում, հավանաբար, ծագում է հունարեն *περὶ πρῶτον* նվագականի (*περὶ πρῶτον* «դեմք» բառից) փոխաբերական իմաստից (հմմտ. 5.3.1), դաստակ «ձեռքի թաթը» 1 թագ. 5.4, նար. «սրի կոթ» Մագ. քեր. 246 <dastak «կոթ, տրցակ» (dast «ձեռք»), դաստակ «սրբիչ» Ոսկ. ա. տիմ. ժդ. Եղիշ. 201.1 <*dastarak, կոհակ (կոխակ ողագրական տարբերակով) 1) «մեծ ալիք», 35. կթդ. 290, նար. և ալլն. 2) «բլուր» 35. կթդ. 283, Արծր. 245 <*kōhak «սար», կապտակ <kapautaka (տե՛ս 4.4.1.), պահակ «պահակություն» 2 թագ. 8.6 *φρουρά*, Փարպ. 66 (տե՛ս 3.4.1.), քուսակ, Բրս. մրկ. 127, Մագ. քեր. 241 <kurrak.

5.6. Որպես գոյականակերտ ածանց-aka-ն հանդես է գալիս նաև հնդիրանական լեզուներում՝ սնսկր. *vadhukā*- «հարսնացու» (*vadhū*- կին), հին պրսկ. *arštika* «նիզակավոր» (*aršti* «նիզակ»), *anāmaka*- ամսվա անուն, ալիստ. *apəṛənayūka* «երիտասարդ» (<*apəṛənayū*-«անչափահաս»), մարե-րեն *σπῆκα* «շուն» <*spnka- (հմմտ. ալ. *span*, սնսկր. *śvan*)⁵⁹

6. 1. Չնայած հնդիրանական լեզուներում -aka ածանցով կազմվում են նաև քանակական բառեր և թվականներ⁶⁰, դասական հայերենում այդպիսի օրինակներ ավանդված չեն, սակայն Փիլոն Ալեքսանդրացու թարգմանություններում, որի երկերում իր արտահայտությունն է գտել թվերի մասին նոր պլուրալիզմական ուսմունքը⁶¹, ինչպես նաև ավելի ուշ շրջանի թարգմանություններում ավանդված է -ակ-ով մի քանի քանական բառ՝ միակ Փիլ. Ժ բան. 229., Իրեն. հերձ. 222, 225 *μονάς* (հմմտ. նաև միայնակ Փիլ. ալլաբ. 143, տեսական 6. *μονάς*), եզակ Փիլ. լին. *ἑξάς*?, երկակ Փիլ. ալլաբ. 106, իմաստ. 65. *δύας*, Դիոն Թծալ. Պիտ., եռակ Փիլ. ալլաբ. 106, Պղատ. օրին. գ. *τριάς*. հմմտ. նաև նախածանցավոր վերեռակ Փիլ. Ժ բան. 228. *ἐπιτρίτος*, մակեդակ Փիլ. լին. 4.27 (Աւգ. *supertertius*) [*ἐπιτρίτος*?], Սահմ. 17.126.28, մակաքառակ Սահմ. 17.126.28. [*ἐπιτεταρτος*?] քառեռակ Նիր.: Այնուհանդերձ քանակական բառերի կերտման համար Փիլոնի թարգմանություններում համակարգային նշանակություն ունի -եակ ածանցը (իրան. *-ya-ka)՝ տամեակ Փիլ. Ժ բան. 228. *δὲχας*, չորեակ Փիլ. լին. *τετράς*, քառեակ Փիլ. իմաստ. 36 *τετράς* և ալլն.:

Այսպիսով, իրանական ծագում ունեցող և իրանական մի շարք փոխառությունների (գործող անձի անուններ, ածականներ, գոյականներ) բաղադրամաս հանդիսացող -ակ ածանցը բառերի համապատասխան դասեր էր կազմում հին հայերենում: Ըստ որում՝ -ակ ածանցի որոշ բառակազմական հնարավորություններ օգտագործվում և երբեմն արհեստականորեն ակտիվացվում էին հունաբան դպրոցի թարգմանիչների կողմից՝ նորակազմություններ ստեղծելու համար, որ առավել ցայտուն արտահայտվել է բայահիմքերից կազմված գործող անձի անունների օրինակի վրա⁶²:

59 Հմմտ. նաև նիսայում գտնված (դեռ չհրատարակված) պարթևական Spak հատուկ անունը խեցու վրա, մ. թ. ա. I դար (հաղորդեց Վ. Ա. Լիվշիցը):

60 Հմմտ. սնսկր.՝ *ekakā*, *dvaka*, *aṣṭaka*. Whitney, op. cit., § 1222 c. Debrunner, op. cit., S 529, միջ. պրսկ. *ēvak* «մեկ» <*aiva-ka-, բելուջ՝ *sayak* «մեկ երրորդ», *p'anjak* «մեկ հինգերորդ», Geiger, op. cit., S 26:

61 А. Ф. Посев. История античной эстетики. Поздний эллинизм. М., 1980. с. 94, 95.

62 Վերջին կողապարը պրոդուկտիվ է նաև ժամանակակից հայերենում, տե՛ս մասնավորապես՝ Ս. Ա. Գալստյան. Անունների հոմանիշությունը և հոմանիշ ածանցները. Երևան, 1974, էջ 67:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻՅԱՆԿ*

¹ Արիստ. ստորոգ.—Ստորոգութիւնը Արիստոտելի.—A Collation with an Ancient Armenian Versions of the Greek Text of Aristotele's Categories. Oxford, 1891, Appendix II, pp. 107-183

² Բուզ.—Փուստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883

³ Բրս. դո.—Բարսեղի Կոստանցոյ Վասն զոհոթեան, աշխատասիրությամբ Կ. Մուրադյանի.—Кавказ и Византия, вып. 3, Ереван, 1982, с. 204—215

⁴ Նզնիկ.—Նզնիկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826

⁵ Նղիշէ.—Նղիշէի Վասն Վարդանայ և Հայոց սլատերագմին, աշխատասիրությամբ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1957

⁶ Նս. պտմ.—Նսերիոսի Կոստանցոյ Պատմութիւն եկեղեցոյ, Վենետիկ, 1877

⁷ Նս. քր.—Նսերի Պատմիկիայ Կոստանցոյ Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Մկր. Ազեբեանց, մասն Ա, Բ, Վենետիկ, 1818

⁸ Եփր. համար.—Saint Ephrem, Commentaire de l'Evangile Concordant, version armenienne, ed. par L. Leloir, Louvain, 1953, (CSCO, v. 137)

⁹ Թևոն.—Թևոնիկայ յաղագս ճարտասանական կրթութեանց, աշխատասիրությամբ Հ. Մանուկյանի, Երևան, 1938

¹⁰ Թր. քեր.—Адонц Н. Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград, 1915, с. 1—76.

¹¹ Իրեն.—Irenaeus, Gegen die Haretiker. Hrsg. von K. Ter-Mékertschian, E. Ter-Minassiantz, Leipzig, 1910

¹² Մագ. քեր.—Գրիգորի Մագիստրոսի Մեկնութիւն քերականին.—№ 10, էջ 223—249

¹³ Յ. կթ.—Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912

¹⁴ Նոնոս. Nonnos. Die Scholten zu fünf Reden des Gregor von Nazianz. Hrsg. von A. Manandian.—Zeitschrift für armenische Philologie, Bd I, H 3, Marburg, 1993, SS. 220-272

¹⁵ Պիտ.—Սբբոյ քերթողահօր մերոյ Մովսէսի Խորենացոյ հախակրթութիւն հոնտորական ասացեալ Գիրք Պիտոյի, աշխատասիրութեամբ Յ. Զօհրապեան, Վենետիկ, 1796

¹⁶ Պտմ. Աղեքս.—Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ, Վենետիկ, 1842

¹⁷ Սահմ.—Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, աշխատասիրությամբ Ս. Արեշատյանի, Երևան, 1960

¹⁸ Ստեփ. քեր.—Ստեփանոսի Սինեցոյ Մեկնութիւն քերականին.—№ 10, էջ 183—219

¹⁹ Վեցօր.—Բարսեղ Կեսարացի, Յաղագս վեցօրեայ արարչութեան, աշխատասիրությամբ Կ. Մուրադյանի, Երևան, 1984

²⁰ Տիմ. Կուղ.—Տիմոթէոսի Հակածառութիւն առ սահանանալս յ ժողովոյն Քաղկեդոնի, աշխատասիրությամբ Կ. Տեր-Մկրտչյանի և Ե. Տեր-Մինասյանի, էջմիածին, 1908

²¹ Փարպ.—Ղաղարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատասիրությամբ Գ. Տեր-Մկրտչյան, Ստ. Մալխասյան, Տիֆլիս, 1904

²² Փիլ. այլար.—Փիլոնի Աստուածային օրինացն այլարանութիւն.—Փիլոնի Հերրայեցոց ճառք թարգմանեալք ի հախանեաց մերոց, որոց հելլեն բնագիրք հասին առ մեզ, Վենետիկ, 1892, էջ 165—177

²³ Փիլ. բագն.—Փիլոնի Յաղագս բագնին իրաց.—նույն տեղում, էջ 201—219

²⁴ Փիլ. ժ բան.—Փիլոնի Յաղագս տասն բանից.—նույն տեղում, էջ 220—267

²⁵ Փիլ իմաստ.—Փիլոնի կեանք իմաստնոց.—նույն տեղում, էջ 33—104

²⁶ Փիլ. շն.—Փիլոնի Յաղագս թէ ոչ շնայցես.—նույն տեղում, էջ 268—284

²⁷ Փիլ. տեսական.—Փիլոնի Յաղագս վարուց կենաց տեսականի.—նույն տեղում, էջ 5—32

²⁸ Փիլ. քհ.—Փիլոնի Յաղագս քահանայիցն և երկոտասան ականց.—նույն տեղում, էջ 178—200

* Այն հապավումները, որոնք ցանկում չեն նշված, բերվում են ըստ նոր բառգիրք հայկազեան լեզունի (ԵՀԲ), հ. 1, էջ 9—20 և 2. Ահա այն. Հայերեն արմատական բառարան (ԱԲ). հ. 1, Երևան, 1971, էջ 30—58:

29 Փիլ. լիւ.—Փիլոնի Այնոցիկ որ ի լինելութեան խնդրոց և լուծմանց բանք Դ.—Փիլոնի Երրանցեոյ Մեկնութիւն ծննդոց և ելից, ճառք ի Սամիսոն, ի Յովնան, աշխատասիրութեամբ Մկր. Ազգերեանց, Վենետիկ, 1826, էջ 1—443

30 Փիլ. ԼԼ.—Փիլոնի Այնոցիկ որ յիւն է խնդրոց և լուծմանց բանք Բ.—նույն տեղում, էջ 444—548

31 Փիլ. Սամիսոն.—Փիլոնի ի Սամիսոն.—նույն տեղում, էջ 549—577

32 Փիլ. Նիս.—Փիլոնի Յաղազս նախախնամութեան.—Փիլոնի Երրանցեոյ Յաղազս նախախնամութեան, Յաղազս բան ունել անասուն կենդանեաց, աշխատասիրութեամբ Մկր. Ազգերեանց, Վենետիկ, 1822, էջ 1—121

33 Փիլ. լիւ.—Փիլոնի Յաղազս բան ունել անասուն կենդանեաց.—նույն տեղում, էջ 123—172

СУФФИКС -ak В ДРЕВНЕАРМЯНСКОМ

Г. С. АСАТРЯН, Г. С. МУРАДЯН

Резюме

Среди многочисленных иранских заимствований в древнеармянском засвидетельствован ряд имен с суффиксом *-ակ* (ср. ир. *-āk*): имена деятеля (*վարձակ*, *գրչակ*), прилагательные (*արձակ*), субстантивы (*թօշակ*, *պահակ*), причем армянские свидетельства для многих из них являются единственными. На основе этих имен было создано небольшое число соответствующих разрядов слов уже на армянской почве (кроме наиболее часто встречающихся и, соответственно, наиболее часто постулируемых в литературе диминутивов): имена деятеля (*գտակ*, *գիտակ*, *սխալակ*), прилагательные (*խառնակ*, *աչոռակ*), субстантивы, образованные от глагольных основ (*զրիպակ*, *աւերակ*), от существительных с конкретизацией или сужением значения из диминутивности (*անրակ*, *գնդակ*, *հրուակ*), от прилагательных (*ներքնակ* «нижняя одежда»). Наибольшее число засвидетельствованных в древнеармянском имен на *-ակ* было создано переводчиками «грекофильской школы», которые с целью калькирования морфологического состава греческих слов не только использовали существовавшие в языке продуктивные словообразовательные модели, но и в случае необходимости активизировали малопродуктивные модели (последнее особенно касается созданных ими имен деятеля от глагольных основ), а иногда даже создавали новые, правда, аналогичные уже существовавшим (как образование субстантивов на *-ակ* от наречий, союзов и числительных). По их образцу создавали новые слова (в основном имена деятеля) поздние, особенно «грекофильствующие», авторы.

Анализ всех значений древнеармянских имен с указанным суффиксом проводится в статье в сравнении с иранским материалом, что позволяет проследить их происхождение и полнее вскрыть их семантику.